

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐՔԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԵՌՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՈՒՂԵՔԵՌ ՓՈԽԱԴՐՈՂ  
ԿՑՈՐԴՆԵՐԻ, ԿԻՍԱԿՑՈՐԴՆԵՐԻ, ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ  
ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում՝ Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 344 (2) հոդվածի հիմքով և Մաքսային միության մաքսային տարածքով ներքին փոխադրումներ իրականացնելու համար ժամանակավոր ներկրվող՝ ուղևորների փոխադրում իրականացնող միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բեռներ և (կամ) ուղեբեռ փոխադրող կցորդների, կիսակցորդների, կոնտեյներների և երկաթուղային շարժակազմի օգտագործման առանձնահատկությունները սահմանելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին՝

### Հոդված 1

Սույն Համաձայնագիրը սահմանում է Մաքսային միության մաքսային տարածքով առանց մաքսատուրքի, հարկերի ժամանակավոր ներկրվող միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցների օգտագործման առանձնահատկությունները Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 342(1) կետի համաձայն, որոնք իրականացնում են ուղևորների փոխադրում, ինչպես նաև բեռներ և (կամ) ուղեբեռ տեղափոխող կցորդների, կիսակցորդների, կոնտեյներների և երկաթուղային շարժակազմի (այդ թվում՝ միջազգային փոխադրման դատարկ տրանսպորտային միջոցների) օգտագործման առանձնահատկությունները Մաքսային միության մաքսային տարածքով ներքին փոխադրումներ իրականացնելու համար:

### Հոդված 2

Մաքսային միության մաքսային տարածքով ներքին փոխադրումների ժամանակ որպես միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցներ չեն թույլատրվում կցորդները, կիսակցորդները, կոնտեյներները (բացառությամբ երկաթուղային կոնտեյներների), օդանավերը, նավերը (ծովերի և գետերի):

### Հոդված 3

Միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցները, որոնք կատարում են ուղևորների փոխադրում սահմանված երթուղու շրջանակում կարող են կանգ առնել Կողմ հանդիսացող պետությունների տարածքում ուղևորներ վերցնելու

(ուղևորներին իջեցնելու) և ուղեկցող ուղեբեռ բարձելու (բեռնաթափելու) նպատակով միջազգային փոխադրումների երթուղու կայանային կետերում:

#### Հոդված 4

Բեռների ներքին փոխադրումներ իրականացնելու համար թույլատրվում է միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցների օգտագործում, բացառությամբ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված տրանսպորտային միջոցների, եթե՝

- ներքին փոխադրումը իրականացվում է միջազգային փոխադրում իրականացնելուց հետո, որի կատարման համար միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցը ներս է բերվել Կողմ հանդիսացող պետության տարածք,

- ներքին փոխադրումը իրականացվում է բեռներ տեղափոխող միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցով ապրանքները դուրսբերելու համար Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս,

- ներքին փոխադրումը իրականացվում է Մաքսային միության մաքսային տարածքով միջազգային փոխադրման դատարկ տրանսպորտային միջոցը անցկացնելու համար:

Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ կարող են սահմանվել սահմանափակումներ, որոնք վերաբերում են միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցների օգտագործման դեպքերի թվին՝ դրա տարածքով ներքին փոխադրումներ կատարելու համար: Այնուամենայնիվ, նման փոխադրումների դեպքերի թիվը չպետք է լինի մեկ անգամից քիչ:

#### Հոդված 5

Կողմ հանդիսացող պետությունների երկաթուղիները (երկաթուղային տրանսպորտի փոխադրողները) Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների պահանջով տեղեկություններ են տրամադրում երկաթուղային շարժակազմի տեղափոխման մասին, սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն ներքին փոխադրումների ժամանակ դրանք օգտագործելիս՝ ԱՊՀ մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի խորհրդի ակտերով սահմանված կարգով և Կողմ պետությունների մաքսային մարմինների հետ կնքված պայմանագրերին համապատասխան:

#### Հոդված 6

Միջազգային փոխադրումների տրանսպորտային միջոցները, որոնք օգտագործվում են սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան, Կողմ պետություններից մեկի տարածքով կարող են ներս բերվել 90 օրը չգերազանցող ժամկետով:

Նշված ժամանակահատվածի մեջ չեն մտնում այն ժամկետները, որոնք անհրաժեշտ են մաքսային և պետական հսկողության այլ ձևեր իրականացնելու համար:

## Հոդված 7

Բեռների փոխադրում իրականացնող ժամանակավոր ներկրված երկաթուղային շարժակազմի փոխանցումը Կողմ հանդիսացող մի պետության երկաթուղուց (երկաթուղային տրանսպորտի փոխադրողից) Կողմ հանդիսացող մյուս պետության երկաթուղուց (երկաթուղային տրանսպորտի փոխադրողից) իրականացվում է երկաթուղային տրանսպորտի ոլորտի գործող միջազգային պայմանագրերի և ԱՊՀ անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի ակտերի համաձայն:

## Հոդված 8

Կողմերի համաձայնությամբ, սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

## Հոդված 9

Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

## Հոդված 10

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կառավարությունների կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի հունիսի 18-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Հանձնաժողովում, որը, հանդիսանալով սույն Համաձայնագրի ավանդապահը, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր հաստատված պատճենը:

**Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից**

(ստորագրություն)